



47 (231). ՂԱԶԱՂ ՈՒ ՍՈՒԼԹԱՆ

Ղաչաղ մե կը բովի, սուլթանն հրաման կիտա՝ զձեռքն ու չոտք
կապին, շվնով փաթին սան, զփեջգլխնեք ծակին, մոմեք տնկին,
թողնին օր վառին պրծնան:

— Հը՞,— կը հարցու սուլթան,— ըղըրնե մեծ ցավ կա՞:

— Կա՛, խո՛ւռնաղ, կա՛:

— Ի՞նչ ցավ:

— Ըղըրնե մեծ ցավն է՛ն է, եր տուն խոնախ գա, բան չէղնի
ղնին յառեջ:

Սուլթան կը թռնա չոտքի, կըսե.

— Ափսո՞ս, չը գինեք օր հմալ սիրտ ունիս:

Կըսե, հրաման կիտա, օր շուտ մե ձեռք ու չոտք քանդին, զմո-
մեք մեքին, հմա հարի կը քանդին, զմոմեք կը մեքին, մարդ գընկնա
գետին, կը մեռնի:

